ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվիրակություն Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անուն ազգանուն, զբաղեցրած պաշտոն. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝ որպես Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբում (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) ՀՀ մշտական պատվիրակության ղեկավար Կարեն Կարապետյան, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյան, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյան, նույն Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ, ԲԿԳ նախաձեռնության համակարգող Լիլյա Աֆրիկյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Լառա Պետրոսյան և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյան:

Գործուղման վայրը և ժամկետները. Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), Կարեն Կարապետյան՝ 2024թ. մարտի 17-ից 21-ը, Մարիամ Գալստյան և Լիլիթ Ալեքսանյան՝ ս.թ. մարտի 17-ից 20-ը, իսկ մյուս անդամների համար՝ ս.թ. մարտի 17-ից 23-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի քարտուղարություն:

Գործուղման նպատակը. մասնակցություն ԳՐԵԿՈ-ի 96-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները. Հայաստանի Հանրապետության ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի զեկույցի առաջին ընթերցում, քննարկում, ընթացիկ բանակցություններ և զեկույցի հաստատում**,** Իտալիայի և Վրաստանի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի զեկույցների առաջին ընթերցում, քննարկում և հաստատում, նշյալ երկրների ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ համապատասխանության զեկույցների քննարկում և հաստատում, Հունաստանի և Լիտվայի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի համապատասխանության զեկույցների քննարկում և հաստատում, Բելգիայի, Խորվաթիայի և Ֆրանսիայի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի 2-րդ համապատասխանության զեկույցի քննարկում և հաստատում, Ղազախստանի ԳՐԵԿՈ-ի 1-ին և 2-րդ փուլի համատեղ գնահատման փուլի զեկույցի հաստատում, ԳՐԵԿՈ-ի անդամ պետություններում հակակոռուպցիոն վերջին ձեռքբերումներ, ԳՐԵԿՈ-ում դիտորդ հանդիսացող միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարում վերջին ձեռքբերումներ, քննարկում և մանրաքմասների ներկայացում առաջիկայում նախատեսվող ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակի վերաբերյալ,

քննարկում ԳՐԵԿՈ-ի քարտուղարության ներկայացուցիչների հետ ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլի վերաբերյալ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին, Ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը, նույն Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ, ԲԿԳ նախաձեռնության համակարգող Լիլյա Աֆրիկյանը, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Լառա Պետրոսյանը և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել են 2024 թվականի մարտի 18-ից մարտի 22-ը կայացած ԳՐԵԿՈ-ի 96-րդ լիագումար նիստին (այսուհետ՝ Նիստ):

Նիստի ընթացքում կայացել է Հայաստանի Հանրապետության՝ ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի Հայաստանի զեկույցի առաջին ընթերցումը, տեղի են ունեցել ընթացիկ բանակցություններ և հաստատվել է վերոնշյալ զեկույցը, քննարկվել և հաստատվել են Իտալիայի և Վրաստանի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի զեկույցները, նշյալ երկրների ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման փուլի 2-րդ համապատասխանության զեկույցները, Հունաստանի և Լիտվայի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի համապատասխանության զեկույցները, Բելգիայի, Խորվաթիայի և Ֆրանսիայի ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման փուլի 2-րդ համապատասխանության զեկույցները, Ղազախստանի ԳՐԵԿՈ-ի 1-ին և 2-րդ փուլի համատեղ գնահատման փուլի զեկույցը, ներկայացվել են ԳՐԵԿՈ-ի անդամ պետություններում հակակոռուպցիոն վերջին ձեռքբերումները, քննարկվել է առաջիկայում նախատեսվող՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակը, ԳՐԵԿՈ-ի քարտուղարության ներկայացուցիչների հետ քննարկվել են ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետության գնահատման 5-րդ փուլի զեկույցի ընդունմանը հաջորդող քայլերի վերաբերյալ հարցեր:

Հայաստանի Հանրապետությանն առնչվող քննարկումների վերաբերյալ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) առաջին ընթերցմանը նախորդել է ԳՐԵԿՈ-ի քարտուղարության և հայաստանյան զեկույցի ԳՐԵԿՈ-ի գնահատող թիմի հետ հանդիպումը: Հանդիպման ընթացքում բանակցություններ են վարվել ԳՐԵԿՈ-ի քարտուղարության և ԳՐԵԿՈ-ի գնահատող թիմի հետ մի կողմից և Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ մյուս կողմից: Հանդիպման ընթացքում ԳՐԵԿՈ-ում հայկական պատվիրակության ղեկավար Կարեն Կարապետյանը, պատվիրակության անդամներ Արփինե Սարգսյանը, Մարիամ Գալստյանը, Լիլիթ Ալեքսանյանը, Լիլյա Աֆրիկյանը, Լառա Պետրոսյանը և Տաթևիկ Խաչատրյանը պատասխանել են հարցերին և փաստարկներ ներկայացրել՝

պնդելով ՀՀ դիրքորոշումը զեկույցում ներառված մի շարք կետերի վերաբերյալ: Զեկույցը առաջին ընթերցումը ՀՀ պատվիրակության ներկայացրած փաստարկների հիման վրա փոփոխված ձևով կայացել է սույն թվականի մարտի 18-ին և հաստատվել մարտի 22-ին:

Սույն թվականի մարտի 18-ին Զեկույցի քննարկման շրջանակում Կարեն Կարապետյանը՝ որպես ԳՐԵԿՈ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար, հանդես է եկել բացման խոսքով, ներկայացրել ԳՐԵԿՈ-ի հանձնառությունների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք սահմանված են նաև 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ և հայտնել ՀՀ դիրքորոշումը Զեկույցում ամրագրված յուրաքանչյուր հանձնարարարականի կատարման վերաբերյալ:

Սույն թվականի մարտի 21-ին կայացած «ԳՐԵԿՈ-ի գնահատման 6-րդ փուլի շրջանակը» խորագրով քննարկմանը ԳՐԵԿՈ-ում ՀՀ պատվիրակության անդամները ներկայացրել են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը առաջարկվող թեմաների վերաբերյալ:

Ստրասբուրգ կատարած այցի ընթացքում Արադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը և Ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը համատեղ հանդիպում են ունեցել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ Բյոր Բերգեի հետ:

Կարեն Կարապետյան, շնորհակալություն հայտնելով հանդիպման համար, նշել է, որ մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ԵՄ ստանդարտները ՀՀ արդարադատության նախարարության կողմից քաղաքականության մշակման և իրավական կառուցակարգերի զարգացման անկյունաքարային ու բացարձակ ուղենիշեր են: Նա ընդգծել է, որ ԵՄ և Արդարադատության նախարարության միջև համագործակցությունը կրում է ինստիտուցիոնալ բնույթ և իրացվում է թե՛ ԵՄ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի, թե՛ ԵՄ մոնիթորինգային մարմինների ու կոմիտեների հետ աշխատանքների միջոցով: Կարեն Կարապետյանը ներկայացրել է Հայաստանում դատաիրավական, կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ռազմավարական բարեփոխումների ընթացքը և ԵՄ ծրագրերի դերակատարությունն այդ գործում: Հատուկ անդրադարձ է կատարվել ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հետ կատարված լայնածավալ աշխատանքին, այդ թվում՝ Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցի հանձնարարականների կատարման առաջընթացին, հինգերրորդ փուլի զեկույցի մշակման և հաստատման ընթացքին: Կողմերը քննարկել են նաև Հայաստանում սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացը: Քննարկվել են Վենետիկի հանձնաժողովի հետ տարվող աշխատանքները դատաիրավական, ընտրական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում բարեփոխումների շրջանակներում: Կողմերը քննարկել են նաև տարածաշրջանի անվտանգային խնդիրները: Կարեն

Կարապետյանը ներկայացրել է նաև ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության երաշխավորմանն առնչվող հարցերը, շնորհակալություն հայտնել այս ուղղությամբ ԵՄ-ի կողմից մեկնարկած նոր ծրագրի համար և ընդգծել ԵՄ շարունակական աջակցության կարևորությունը: Քննարկվել է նաև ԵՄ հետ վիզաների ազատականացման գործընթացներից բխող համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ամրապնդման ուղղությամբ ԵՄ-Հայաստան համագործակցության հեռանկարները, այդ թվում՝ միգրացիայի, անձնական տվյալների պաշտպանության և իրավահավասարության ոլորտներում: Նշվել է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների և ԵՄ-ի միջազգային իրավական գործիքների շրջանակներում համագործակցության կարևորությունը: ԵՄ գլխավոր քարտուղարի տեղակալ Բյորն Բերգեն, շնորհակալություն հայտնելով հյուրերին հանդիպման և ոլորտային զարգացումների ներկայացման համար, բարձր է գնահատել ԵՄ-Հայաստան փոխգործակցության մակարդակը և ընթացիկ բարեփոխումների ոլորտներում համատեղ ջանքերի արդյունքները: Նա նշել է, որ Հայաստանը շատ կարևոր անդամ պետություն է հանդիսանում ԵՄ համար և վերահաստատել ԵՄ պատրաստակամությունը՝ անվերապահորեն աջակցելու ՀՀ կառավարության կողմից որդեգրված ժողովրդավարական բարեփոխումներին ու Եվրոպական արժեքների և չափանիշների ներդրման ձգտումներին: Ամփոփելով հանդիպումը՝ կողմերը քննարկել են առաջիկայում կայանալիք բարձրաստիճան հանդիպումներն ու միջոցառումները, այդ թվում՝ ապրիլ ամսին կայանալիք ԵՄ գլխավոր քարտուղարի այցի մանրամասները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Ներքին գործերի նախարարության ստեղծմանը, Ոստիկանությունում, Փրկարար ծառայությունում, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում իրականացվող ռազմավարական փոփոխություններին, վիզաների ազատականացմանը, Եվրոպական Միությանը Հայաստանի հնարավոր անդամակցությանը, հակակոռուպցիոն, դատաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող ռազմավարական օրակարգերին առնչվող հարցեր:

Ներքին գործերի փոխնախարար Սարգսյանը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի՝ որպես ժողովրդավարական կառուցակարգերի զարգացման հայաստանյան օրակարգին աջակցող հուսալի գործընկերոջ հետ առկա գերազանց համագործակցությունը: Սարգսյանը փաստել է, որ ներքին գործերի բնագավառում իրականացվող լայնածավալ բարեփոխումների հարցում Եվրոպայի խորհուրդն ունի իր նշանակալի ներդրումը՝ բերելով համատեղ ուժերով մարդու իրավունքների, օրենքի գերակայության ոլորտում նոր նշաձողեր նվաճելուն:

ԵՄ գլխավոր քարտուղարի տեղակալ Բյորն Բերգեն բարձր է գնահատել Հայաստանի Կառավարության և Ներքին գործերի նախարարության վճռականությունը՝ ոլորտային հավակնոտ բարեփոխումների իրականացման հարցում: Բերգեն հայտնել է Եվրոպայի

խորհրդի լիակատար աջակցությունը Հայաստանի Կառավարության բարեփոխումների օրակարգի իրականացմանը:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել նաև ԵԽ հետ իրականացվող ծրագրերի ընթացքին և գրանցած հաջողություններին, ՄԻԵԴ վճիռների կատարման շրջանակներում համատեղ ձեռնարկված քայլերին, այդ թվում՝ «Ոստիկանական Գվարդիայի մասին» նոր օրենքի մշակմանը, որոնք հավաքների ազատության իրավունքի իրացման հարցում նոր ստանդարտներ կերաշխավորեն, ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքներին, վատ վերաբերմունքի հնարավոր դրսևորումների պատշաճ փաստաթղթավորմանը: Կարևորվել է հանցավորության կանխարգելման ռազմավարական մոտեցումների ամրագրումը:

Կողմերը զրուցել են նաև ԳՐԵԿՈ-ի 5-րդ գնահատման զեկույցի մշակման և հաստատման ընթացքի մասին, որտեղ գնահատվում է նաև Ոստիկանությունը, ինչպես նաև Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի՝ Հայաստան կատարած պարբերական այցի արդյունքում մշակված զեկույցում առկա դրական արձանագրումների և դեռևս լուծման ենթակա քայլերի մասին:

Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվել են շարունակել արդյունավետ գործընկերությունն ու ընդլայնել համագործակցության ուղղությունները:

ՀՀ արադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը հանդիպել է («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողով) գլխավոր քարտուղար Սիմոնա Գրանատա-Մենգինիի հետ: Հանդիպման ընթացքում Կարեն Կարապետյանը կարևորել է Վենետիկի հանձնաժողովի և արդարադատության նախարարության միջև ձևավորված համագործակցությունը և հանձնաժողովի ներդրումը Հայաստանում ընթացող դատաիրավական և սահմանադրական բարեփոխումներին: Հատուկ անդրադարձ է կատարվել վերջին տարիներին նախարարության կողմից նախաձեռնված մի շարք կարևորագույն նախագծերի մշակման գործում Հանձնաժողովի ցուցաբերած գործուն աջակցությանը:

Կողմերը քննարկել են նաև Հանձնաժողովի հետ համագործակցությամբ մշակված մի շարք օրենսդրական ակտեր, մասնավորապես՝ դատավորների նկատմամբ Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների բողոքարկման մեխանիզմների ներդրման, դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների թվի ավելացման, ՀՀ ընտրական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագծերը, ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագիծը:

Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Արդարադատության նախարարության հետ համագործակցության մակարդակը և շնորհակալություն հայտնել Հանձնաժողովի կողմից ներկայացվող կարծիքների

նկատմամբ ցուցաբերված հետևողականության համար: Կողմերը քննարկել են նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող դատական և իրավական բարեփոխումների օրակարգի շրջանակներում Հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակների ընդլայնման հնարավորությունները:

Ստրասբուրգ կատարած այցի ընթացքում Արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը հանդիպել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Խրիստոս Ջակումոպուլոսին: Նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել ԵԽ-ի կողմից Արդարադատության նախարարությանը մարդու իրավունքների պաշտպանության, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ իրականացվող ռազմավարական բարեփոխումների և ժողովրդավարական կառուցակարգերի զարգացման օրակարգին ցուցաբերվող գործուն աջակցության համար:

Քննարկվել են ԵԽ կողմից իրականացվող ծրագրերի ընթացքը և գրանցված ձեռքբերումները, այդ թվում՝ դատահիրավական, հակակոռուպցիոն, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների բարեփոխումների օրակարգերի և ՄԻԵԴ վճիռների կատարման շրջանակներում:

Կողմերն ընդգծել են նաև ՀՀ-ԵԽ նոր 2023-2026թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում նախարարության համակարգման ոլորտներում մեկնարկված ծրագրերը, մասնավորապես՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավունքների և երաշխիքների ապահովման և սահմանադրական արդարադատության համակարգի ամրապնդման ուղղություններով: Քննարկվել են նաև Արդարադատության նախարարության և ԵԽ մարմինների ու կոմիտեների հետ ընթացիկ աշխատանքները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել Վենետիկի հանձնաժողովի հետ համագործակցությանն ընթացող դատահիրավական, ընտրական և մարդու իրավունքների պաշտպանության բարեփոխումների շրջանակներում: Անդրադարձ է կատարվել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի զեկույցի հանձնարարականների կատարման առաջընթացին և հինգերորդ փուլի զեկույցի մշակման և հաստատման ընթացքին:

Գլխավոր տնօրեն Ջակումոպուլոսը բարձր է գնահատել ՀՀ կառավարության և Արդարադատության նախարարության կատարած աշխատանքները՝ մարդու իրավունքների պաշտպանության, դատահիրավական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի, ՄԻԵԴ վճիռների կատարման ուղղությամբ և վստահություն հայտնել, որ ԵԽ հետ համագործակցությունը շարունակելու է իր նշանակալի ներդրումը գրանցել Հայաստանում ընթացող բարեփոխումների, ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության և իրավական ինստիտուտների զարգացման գործում:

Հանդիպման ավարտին կողմերը քննարկել են նաև ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության աջակցության

շրջանակների ընդլայնման հնարավորությունները՝ սահմանադրական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի 2023-2026թթ. ռազմավարության իրականացման աջակցության, անձնական տվյալների պաշտպանության և մի շարք այլ ուղղություններով:

Այցի շրջանակներում Արփինե Սարգսյանը հանդիպել է նաև Եվրոպայի խորհրդի (CoE) ծրագրերի համակարգման տնօրեն Կլաուս Նոյկիրխին:

Փոխնախարար Սարգսյանը Կլաուս Նոյկիրխին է ներկայացրել ներքին գործերի բնագավառում իրականացվող լայնածավալ բարեփոխումները:

Կլաուս Նոյկիրխը բարձր է գնահատել Ներքին գործերի նախարարության հետ առկա համագործակցությունն ու բարեփոխումների հավակնոտ օրակարգի իրականացումը:

Կողմերը քննարկել են ՆԳՆ և ԵԽ գործընկերությամբ համատեղ իրականացվող ծրագրերի մանրամասները և դրանց հաջող ընթացքը: Անդրադարձել են նաև առաջիկայում Երևանում պաշտոնապես մեկնարկվող «Հայաստան տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» ծրագրին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ՄԻԵԴ վճիռների կատարմանը, դրա շրջանակներում «Ոստիկանական Գվարդիայի մասին» նոր օրենքի մշակմանը, ուժի կիրառման համաչափության ստանդարտներով վերապատրաստումների իրականացմանը, վատ վերաբերմունքի հնարավոր դեպքերի պատշաճ փաստաթղթավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելման ուղղությամբ ընթացող օրենսդրական և գործնական փոփոխություններին:

Կողմերը պայմանավորվել են շարունակել ակտիվ համագործակցությունն ու ընդլայնել գործընկերության ուղղությունները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ընդունվել է Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի՝ «Կոռուպցիայի կանխարգելմանը և բարեվարքության խթանմանը բարձրագույն գործադիր և իրավապահ մարմիններում» զեկույցի տեքստը, որը կհրապարակվի հաջորդ շաբաթ:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

4/3/2024

X

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN KAREN 4008830693

Կարեն Կարապետյան

29.03.2024թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***Վարչապետի աշխատակազմ***
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի N 228-Ա որոշում***
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Լիլյա Աֆրիկյան Արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը ***Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Ստրասբուրգ***
5. Գործուղման ժամկետները ***17-23.03.2024թ.***
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
■ 1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
Ճանապարհածախս և գիշերավարձ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման սահմանսի համաձայն

Ծախսի տեսակը		*Աֆրիկյան Լիլյա*			**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	ավիատոմս	290.091դրամ			
	էկոնոմ դաս				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	132.76 €			
	Օրերի քանակը	6.0			
			-	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	114 €			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը	7	7	7	
	Ընդամենը (դրամ)	-			-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	0			-
	Մուտքի արտոնագրի վճար	0			-
	Այլ ծախսեր				
		-			-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-	-	-

Ստորագրություն

«27» «մարտի» 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ ՆԳՆ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — ՀՀ ՆԳ նախարարի 23.02.2024թ.. Թիվ 958-ա հրաման
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

   ՀՀ ՆԳՆ պետի տեղակալ Արփինե Սարգսյան
4. Գործուղման վայրը — Ստրասբուրգ
5. Գործուղման ժամկետը — 17.03.2024թ-22.03.2024թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
(ճանապարհածախս, գիշերավարձ,օրապահիկ)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)

	ա.	փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
	բ.	գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արփինե Սարգսյան	Ընդամենը (հազ. դրամ)
գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար Ստրասբուրգ (արտարժույթով)	124 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54221	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	271105	271,1
օրապահիկ	Վճարը 1 օրվա համար Ստրասբուրգ (արտարժույթով)	114 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49849	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	249245	249,2
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		520,4	520,4

ՀՀ ՆԳՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը համարը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի մարտի 11-ի թիվ 228-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Կարեն Կարապետյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Լառա Պետրոսյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ,Տաթևիկ Խաչատրյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ

4. Գործուղման վայրը Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ)

5. Գործուղման ժամկետները 2024թ. մարտի 17-23-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☒ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կարեն Կարապետյան	Տաթևիկ Խաչատրյան	Լառա Պետրոսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		Էկոնոմ դաս	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		262,473	292,475	555,0
	206 եվրո (արտարժույթով)		164 եվրո	164 եվրո	

	Վճարը 1 օրվա համար (դրամ)		72,228.88	72,228.88	
	Օրերի քանակը		6	6	
	Ընդամենը (դրամ)		կանխավճար (6*164€=984€*440.42դրամ =433,373 դրամ, որի 60%=260,024դրամ	կանխավճար (6*164€=984€*440.42դրամ =433,373 դրամ, որի 60%=260,024դրամ	520,0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	114 եվրո	114 եվրո	114 եվրո	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,207.88	50,207.88	50,207.88	
	Օրերի քանակը	5	7	7	
	Ընդամենը (դրամ)	251,039.40	351,455.16	351,455.16	953,9
Այլ ծախսեր	Մուտքի արտոնագրի վճար		15,670	15,670	31,3
	ՊՊՍ սրահում սպասարկում				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		251,039.40	889,622"16	919,624.2	2,060.2

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ